ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№1264-Ա « 04 » ապրիլի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի Հ.3757-Ա ԵՎ Հ.3758-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով.

1. Երևանի քաղաքապետի 2018 թվականի դեկտեմբերի 26-ի հ.3757-Ա և Երևանի քաղաքապետի 2018 թվականի դեկտեմբերի 26-ի հ.3758-Ա որոշումների համապատասխանաբար՝ հ.3 և հ.1 հավելվածներում կատարել հետևյալ լրացումները.

1) Երևանի քաղաքապետի 2018թ. դեկտեմբերի 26-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման գործընթացների կանոնակարգման մասին» հ.3757-Ա որոշման հ.3 հավելվածը՝ «Նելլի Ղարդյան Երևան քաղաքի ավագանու անդամ՝ «Հանրապետություն» խմբակցություն» բառերից հետո լրացնել «Արշակ Սարգսյան Երևան քաղաքի ավագանու անդամ՝ «Մայր Հայաստան» խմբակցություն» բառերով.

2) Երևանի քաղաքապետի 2018 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկությունների կազմակերպումն ու անցկացումը կանոնակարգելու մասին» հ.3758-Ա որոշման հ.1 հավելվածը՝ «Անի Խաչատրյան Երևան քաղաքի ավագանու անդամ՝ «Հանրապետություն» խմբակցություն» բառերից հետո լրացնել «Արշակ Սարգսյան Երևան քաղաքի ավագանու անդամ՝ «Մայր Հայաստան» խմբակցություն» բառերով:

2. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246